# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 30

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 10 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել ավագանու 2015 թվականի սեպտեմբերի 11-ի N 10 հերթական նիստի օրակարգը՝

1.Զորավան համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի N 34-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2.Հայաստանի Հանրապետության Զորավան համայնքի սեփականություն համարվող հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:

3.Զորավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն առանց մրցույթի վարձակալության տալու մասին:

4.Զորավան համայնքի ավագանու 2013 թվականի մայիսի 14-ի N 14-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՂԱՎԱԼԲԱԲՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
5. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 31-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 34-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.Զորավան համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի «Զորավան գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 34-Ն որոշման մեջ կատարել փոփոխությունները.

1)Համայնքի բյուջեի Ֆոնդային մասի 06-4-1 ծրագրի «Շենքերի և շինությունների կառուցում» 5112 հոդվածից 2400000 /երկու միլիոն չորս հարյուր հազար/ դրամ փոխանցել 04-5-1 ծրագրի «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» 5113 հոդվածին:

2)Համայնքի բյուջեի Ֆոնդային մասի 06-4-1 ծրագրի «Շենքերի և շինությունների կառուցում» 5112 հոդվածից 1000000 /մեկ միլիոն/ դրամ փոխանցել 01-1-1 ծրագրի «Շենքերի և շինությունների կառուցում» 5112 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՂԱՎԱԼԲԱԲՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
5. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 32-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Զորավան համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն աղյուսակի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՂԱՎԱԼԲԱՐՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
5. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*

Առյուսակ 1

Գյուղատնտեսական  նշանակության հողի աճուրդ-վաճառք

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը | Սահմանափակումները |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական նշանակության հող | գ. Ձորավան | 07-031-0226-0028 | 4.18443 | գյուղատնտեսական | III կարգ անջրդի | Արոտավայր | 1 323 000 | չկան |
| 1 | Գյուղատնտեսական նշանակության հող | գ. Ձորավան | 07-031-0226-0029 | 3.1122 | գյուղատնտեսական | III կարգ անջրդի | Վարելահող Արոտավայր Այլ հող | 1 000 000 | չկան |
| 1 | Գյուղատնտեսական նշանակության հող | գ. Ձորավան | 07-031-0213-0002 | 0.1613 | գյուղատնտեսական | IV կարգ անջրդի | Վարելահող | 48 000 | չկան |
| | | | | | | | | | |

Համայնքի ղեկավարի աշխատակազմի
քարտուղար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 33-Ն

## ԶՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.«Արարատ-Ճանշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը առանց մրցույթի, օգտակար հանածոյի արդյունահանման ՇԱԹՎ-29/112 թույլտվությունով սահմանված ժամկետով, մինչև 2065 թվականի հուլիսի 1-ը տարեկան 768000 /յոթ հարյուր վաթսունութ հազար/ դրամ վարձավճարով վարձակալության տրամադրել գյուղ Զորավան, 07-031-0209-0026 կադաստրային ծածկագրի 5.1158 հա հողը՝ ընդերքօգտագործման նպատակով օգտագործելու համար:

2. «Արարատ-Ճանշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը առանց մրցույթի, օգտակար հանածոյի արդյունահանման ՇԱԹՎ-29/112 թույլտվությունով սահմանված ժամկետով, մինչև 2065 թվականի հուլիսի 1-ը տարեկան 152000/մեկ հարյուր հիսուներկու հազար/ դրամ վարձավճարով վարձակալության տրամադրել գյուղ Զորավան, 07-031-0209-0029 կադաստրային ծածկագրի 1.0088 հա հողը՝ ընդերքօգտագործման նպատակով օգտագործելու համար:

3.«Արարատ-Ճանշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը առանց մրցույթի, օգտակար հանածոյի արդյունահանման ՇԱԹՎ-29/112 թույլտվությունով սահմանված ժամկետով, մինչև 2065 թվականի հուլիսի 1-ը տարեկան 307000 /երեք հարյուր յոթ հազար/ դրամ վարձավճարով վարձակալության տրամադրել գյուղ Զորավան, 07-031-0209-0028 կադաստրային ծածկագրի 2.0429 հա հողը՝ ընդերքօգտագործման նպատակով օգտագործելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ

4. ՂԱՎԱԼԲԱԲՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ

5. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ

6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ

7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
ԱՆՈՒՇ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 34-Ն

## ԶՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի ԹԻՎ 14-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Համայնքի ավագանու 2013 թվականի մայիսի 14-ի «Զորավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության տրամադրելու մասին» N 14-Ն որոշման 1-ին կետում «2018 թվականի ապրիլի 3-ը» բառերը փոխարինել «2065 թվականի հուլիսի 1-ը» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՂԱՎԱԼԲԱԲՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
5. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
ԱՆՈՒՇ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ